ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 343 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱ-ՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող լրացուցիչ նյութերի ուսումնասիրման անհրաժեշտությունից ելնելով, մասնավորապես՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասում նախատեսված հիմքերով վիճարկվող նորմի օրենսդրական փոփոխության ընթացակարգերն ու հիմնավորումները լրացուցիչ վերլուծելու նպատակով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 57 հոդվածի հիմքով վերսկսել գործի վարույթը:
2. Վերսկսված գործի դատաքննությունը հետաձգել մինչեւ 2009թ. դեկտեմբերի 1-ը, ժամը 14.00՝ պահանջելով պատասխանող կողմից հնգօրյա ժամկետում սահմանադրական դատարանին տրամադրել «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 16.12.2005թ. ՀՕ-33-Ն ՀՀ օրենքով կատարված փոփոխության հիմնավորումները, ինչպես նաեւ հարցն Ազգային ժողովում քննարկելու եւ փոփոխություններն ընդունելու նիստի սղագրության եւ տեսագրության պատճենները:
3. Հաշվի առնելով կողմերի կարծիքները, վերսկսված գործի դատաքննությունը շարունակել բանավոր ընթացակարգով՝ հնարավորություն ընձեռելով կողմերին վեր-սկսված դատաքննության շրջանակներում հանդես գալու նաեւ եզրափակիչ ելույթներով: Այդ առնչությամբ ուժը կորցրած ճանաչել ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի հունիսի 30-ի ՍԴԱՈ-58 աշխատակարգային որոշման 4-րդ կետը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

10 նոյեմբերի 2009 թվականի
ՍԴԱՈ -98